ՕՐԱԿԱՐԳ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2024 թվականի ապրիլի 10-ի, ժամը 14:00-ի նիստի

1. **Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների ձևավորման մասին:**
   Զեկուցող՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Վ.Գրիգորյան**:

2. **Ամբիոնի վարիչների թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթին մասնակցելու մասին** («Առավոտ» օրաթերթ, 20.02.2024, N 031 / 7032):
   Զեկուցողներ՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Վ.Գրիգորյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ **Ա.Ա.Մկրտչյան**:

   1) **Տնտեսագիտության տեսության ամբիոն**
   Մուշեղ Նորիկի Հակոբյան՝ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու:

   2) **Բիզնես վարչարարության ամբիոն**
   Մարիա Արմենակի Սահակյան՝ բիզնես վարչարարության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու:

   Հավակնորդների գործերը քննարկվել և երաշխավորվել են գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 3-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 3):

3. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 8-ի «Գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողով ստեղծելու և դրա կազմը հաստատելու ու գիտական խորհրդի 2021 թվականի մայիսի 13-ի N 10 - 2 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 4 - 1 որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին:
   Զեկուցող՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Վ.Գրիգորյան**:

   Առաջարկվում է գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի կազմում ընդգրկել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր,

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Մխիթար Ստեփանի Ասլանյանին** (նախագահ): Որոշման 1-ին կետի աղյուսակի

«

1.	Գրիգորյան Արմեն Վարդանի (նախագահ)	ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

»

տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

3.	Գրիգորյան Արմեն Վարդանի	ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

»:

4. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 8-ի «Գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողով ստեղծելու և դրա կազմը հաստատելու ու գիտական խորհրդի 2021 թվականի մայիսի 13-ի N 10 - 4 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 4 - 3 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Զեկուցող՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Վ.Գրիգորյան**:

Առաջարկվում է գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի կազմից հանել «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Սամվել Սերյոժայի Ավետիսյանին**: Որոշման 1-ին կետի աղյուսակի

«

1.	Գալոյան Դիանա Ռոբերտի (նախագահ)	ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

»

տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

1.	Գալոյան Դիանա Ռոբերտի (նախագահ)	միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր

»:

5. «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին 2024 թվականին առաջարկվող **«ՀՀ-ում շինանյութի շուկայի ուսումնասիրություն (ամրանների շրջանառության ոլորտի օրինակով)»** խորագրով հետազոտական թեման հաստատելու մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Հետազոտական թեման քննարկվել և հաստատվել է գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 3-ի հարցման կարգով նիստում (արձանագրություն N 4):

6. Ընթացիկ հարցեր:

1) Ավարտական տարվա ատեստավորումը չանցնելու և ուսումնառության ժամկետը լրանալու պատճառով ասպիրանտուրայից ազատված միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի հեռակա ուսուցման նախկին ասպիրանտ **Ռուզաննա Բարիջանի Թադևոսյանի ատեստավորման** մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

2) 2023 թվականին «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից հայտարարված մրցութային թեմաների շրջանակում իրականացված հետազոտություններով մենագրությունների հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Մենագրությունները երաշխավորվել են հրատարակության գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 3-ի հարցման կարգով նիստում (արձանագրություն N 4):

3) Մարքեթինգի ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Լիլիթ Յուրիի Գալստյանի «B2B մարքեթինգ» ուսումնական ձեռնարկի** հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Ուսումնական ձեռնարկը, 200 օրինակ տպաքանակով, հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի մարտի 19-ի, ժամը 12:00-ի նիստում (արձանագրություն N 28): Այն նախատեսվում է հրատարակել հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով՝ «Տնտեսագետ» հրատարակչությունում:

Գիտական քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2024 թ. ապրիլի 10
Երևան